



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՆՈՒՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԶՄԻՌՆԻԱ ԴԱՐԱԹ 19 ՄԱՐՏ 1877

ԹԻԻ 1062

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Է. Պօլսոյ ՊՈՒՆՁ լրագրէն քաղերով կը հրապարակէր զնկարագրութիւնն Օսմանեան եւսնափոխանական ընդհանուր ժողովոյն առաջին ժողովման հանգիսին, որպէս և զհայերէն թարգմանութիւնն կայսերական ծանրակշիռ պատգամին, որ ընթերցում այս առթիւ:

Երկուշաբթի օրը (Մարտ 7) ժամը 7 1/2-ին (1) աստիճանները, Տօլմա—Պալատի կայսերական պատան մեծ դահլճին մէջ կատարուեցաւ այս յանձնարար հանգիստը: Օսմանեան դահլճը դահլճին խախտող դրուած էր: Գահուն ալ կողմը նախաբար, սոցա ետեւը հպատակ ազգաց կրօնականները, յորս էր մեր Ս. Պատրիարք Զայրը՝ երուշաղէմայ պատրիարքական փոխանորդ գերաւորներն Արքեպիսկոպոսի հետ, և Շուրայի—Եփէթի ու բարձրագոյն դատարանի անդամներն ուսմանք: Գահուն ձախ կողմը՝ Շէյխ—Իւլ—Խամ Էփէնտին, Շէյխ Զիւսէյին փաշա, կրօնական մեծամեծք, և սոցա ետեւը՝ Ֆէրիդներն, յոյ կողմը կեցած էին նաև դեսպանք ու գործակատարք՝ Պարսից դեսպանին առաջնորդուած մեծ, ամենքն ալ իրենց մեծ համազգեստով զարդարեալ: Գահուն դիմացը ձախ կողմը փոխաններ և ծերակուտի անդամք, սև շէյխ Երանթալուն հաղած և պատուանշան ունեցողները կախած: Ասոնց մէջտեղը երկու կողմանէ պատան պաշտօնակալք կանգնած էին իրենց պատանական հանդերձներովն: Այս միջոցին, զհանուր արարողագրեալ փեմով պէյ օգտուածանին գտնուած սենեակին դուռը բացաւ և յորին վեհափառութիւնը բերաւ դահուն շէյխը: Օգտատափառ Սուլթանին ձախ կողմը զաճառանգ Մէհմետ Բէշառ Էփէնտի և յորորդի ֆէմալէտտին Էփէնտի կեցած էին Սիլիբի համազգեստով: Այս պահուն, պալատան պաշտօնակալք «Մեծութեամբ» կեցցեն:

(1) Կեսրէն 1 1/2 ժամ ետքը:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Թէ ԻՆՁ ՎԻՃԱԿԻ ՄԷՋ Է ՀԱՅ ԼԵՁՈՒՆ

Վիճարանութեան երթարկուող խնդիր մը զամբան զգամ զիւր կարեւորութիւնը կանոնաւորութիւնն առնող խնդիր մը ըստ ինքեան խնդիր անհանգանջութիւնը կտպարուցանէ, և խնդրութեան անհանգանջութիւնը եղող խնդիր մը ըստ ինքեան խնդիր անհանգանջութիւնը:

Սեր աշխարհարաւ լեզուն, որ իւր անկարողութեամբ մեր կացութիւնը կրնէր կայացունէ, որ սակայն մեր ամբողջութեան ամենագլխաւոր տարրը կը համարուի, չորս հինգ դարերէ մեր անկերպարան և անկանոն դրութեան մը մնայր տեսնուելով, յաճախ վիճարանութեան խնդրուած է, զգալով որ իւր խառնակութեամբ անկարելի է աշխարհի պահանջած յաւանդութեան համապատասխանել:

Վիճարանութեան բուն նպատակն է, (թէ և անմիջ հեռի այդ նպատակէն) լեզուն, մասնաւորապէս հաճոյքէն կապտելով, բանին հրամայած մէկ ընդհանուր օրինաց վրայ հիմնել: Այս անգամ կարեւորութիւնն ունի ազգի մը գոյութեան համար, որքան կարեւորութիւնն ունի ինչպէս մարմնոյ մը կազմութեան համար: Թէ և յոյսով յանդիմութիւն համարուի լեզուի վրայ, որ ծանր և մեծ խնդիր է, իմ խօսքու երկու, սակայն ստոյգ է որ մեծ չէնք մը կանգնուած համար փոքր առարկայն ալ զիւր կարեւորութիւնն ունի:

Արդ, ծաղրելի կը թուի ինձ լոկ «գրաբանութեան աշխարհարաւ» երկու բառից վրայ վիճել:

յամայր ամս» պօռացին. և օգոստոս Սուլթանը ձեռքը գտնուած պատգամագիրը Մեծ—Եպարսկոսին յանձնեց, և Բարձրութիւնն ալ զրկեց զայն պալատան գլխաւոր քարտուղարին, և նա բարձրաձայն կարգաց, և կէս ժամու չորս տեւեց և Նորին վեհափառութիւնը ոտքի վրայ կեցած էր: Ընթերցմանէն յետոյ, օգոստոս Սուլթանն բարեկեցիկ զամենքը՝ դարձաւ տեղը. հանդէսը վերջացաւ, և թնդանօթներն սկսան որոտալ ամեն կողմանէ: Գիշերը լուսաւորութիւն եղաւ և պաշտօնատունք՝ մեծամեծաց պալատներն և այլք զարդարուեցան:

Այստիկ, պատգամագրոյն հայերէն ամբողջ քարգմանութիւնը՝ տաճիկերէն բնագրէն, «Երեւակոյտ և Երեսփոխան Էփէնտիներ, Մեր կայսերական Պետութեան մէջ առաջին անգամ համախմբեալ ընդհանուր ժողովը բանալով՝ գոհ կըլլամ:

Յայտնի է ամենեցունցը, թէ պետութեանց ու ազգաց յառաջագիմութիւնը՝ միայն արդարութեան միջոցաւ կը գոյանայ: Մեր պետութեան հաստատութեան ատեններն ալ, նորա ոյժն ու զօրութիւնը տախարհահաշակ եղաւ, վարչական գործոց մէջ՝ արդարութիւն, և ամեն կարգի հպատակաց իրաւանց ու օգտին՝ յարգանք ըլլալուն պատճառաւ: Հանրածանօթ են՝ մեր բարձրաշուք նախահայրերէն հանդուցեալ Սուլթան Մէհմետ Խանի կողմանէ անձնական և կրօնական ազատութեան ապահովութեան համար ցուցուած արտօնութիւնները: Մեր ուրիշ մեծ նախորդք ալ հետեւելով նոյն շաղագի և ոչ մէկ ժամանակ պակասեցուցած չեն կրօնից ու դաւանութեանց ազատութիւնը: Անհար է ուրտալ, թէ այս արդար ընթացից բնական արդարութեան է՝ 600 տարիէ հետէ մեր ամեն կարգի հպատակաց ազգութեան և լեզուի ու կրօնի պահպանութիւնը: Վերջապէս, նոյն դարուց ու ժամանակաց մէջ, շնորհիւ պաշտպանութեան արդարութեան և օրինաց՝ մինչդեռ պետու-

քանի որ խնդիրը ընդ հանրութեան կը վերաբերի, և ոչ միայն այս ինչ գաղտնիքն այն ինչ դատարանին, քանի որ այս երկու դրութեանց միայն մէկուն, ընդհանուր ազգին վրայ բացարձակ իշխանութիւն մը տալու գաղափարը ամուլ պիտի ըլլայ առայժմ: Որքան որ գրաբանով ամեն անհատն է գաղափարաց յայտնութիւն կամ խօսք պահանջելը անկարելի և ծաղրելի է, նայնքան ալ արդի աշխարհարաւ դրութեամբ, որ բարկունեան խառնակութիւնն է, գաղտնականաց Հայ լեզուն կամ գրականութիւնն աւանդելը անկարելի և ծաղրելի է: Վասնզի Հայերը, եթէ չորս միլիոն անհատից մէջ չորս հազար գրող ունին, տարբերութեան քիչ բացառութեամբ, չորս հազար լեզու ունին: Ո՛ր միայն գրագէտը այլ ինձ նման գոնէ երկու կտոր աշխարհարաւ շարագրութիւն, գիրք կամ լրագիր ընթերցողն անգամ չկրնար ուրանալ յայտն Միլենոյն չէնքին միլենոյն գործաւորաց այս գործմանին հակախօսութիւնը կարծես Բաբելոնի աշտարակայնութենէն աւանդ մնացած է հայերուն: Ո՛ր գիտէ գուցէ նախախնամական լիճու մէջ այս: Աչաց առջև թող բերուին ԱՐՇԱԼՈՅՍՏԸ, ՄԱՍԻՍԸ, Ա. ՄԱՍԻՍԸ, ԼՐԱԳԻՐԸ և այլն, և տեսնուին թէ որքան տարբերութիւն ունին, լեզուի մասին, իրարմէ: ԱՐՇԱԼՈՅՍՏԸ եթէ չեմ սկսիր, գրաբան իրեն առաջնորդ ունենալով, նախ շարագրութեան աղետութեան, և տէր բայի, հայցականի ու նախդրի տրակաւնի որոշման նախանձախնդիր է: Երկրորդ՝ ըստ հաճոյս բառերը չթիրախտէ, ինչպէս չեն ընկրտար լեզուներ: Եւ չեմ կարծէր որ գաղափարաց connaitre բառ հաճոյս connaitre գրեն, ինչպէս մենք ճանաչելը մերթ ճանաչել, մերթ ճանաչելը գրեն, նոյնպէս չեմ կարծէր որ, s'elever կամ monter

թեան ու ազգին փարթամութիւնն ու բարօրութիւնը աւելցած էր, հետզհետէ ոչ կրօնական օրինաց (չէր չէր) և ոչ հաստատեալ կանոնաց հաւատարմութիւն չըլլալուն պատճառաւ՝ յառաջագիմութիւնը յետագիմութեան դառնալով, նախկին զօրութիւնը տկարութեան փոխուած էր: Հոռակ ուրեմն, մեծ հայրս հանգուցեալ Սուլթան Մահմուտ Խան՝ մեր պետութեան քանի մը տարիներէ հետէ ստացած նըւազման ու յետագիմութեան գլխաւոր անտես եղող անկանոնութիւնն, և անտի ծագած Եփէնտիի տագնապն մէջ տեղէն վերցունելով՝ պետական ու ազգային մարմնոյն փաստող խռովութեան ու ապստամբութեան փուշերը քաղած, և Երուսղոյ ներկայ քաղաքակրթութիւնը ամենէն յառաջ մեր երկրին մէջ մուծանելու գուռ բացած էր: Փառաւորեալ հայրս, Ապտ—Իւլ—Մէհմետ Խան ալ հետեւելով նոյն շաղագի մեր ժողովրդեան կենաց, ընչից ու պատուոյ պահպանութիւնն երաշխաւորող բարեկարգութեանց (թանգիմութ խալիլի) սկզբունքն հրատարակած էր: Ահաւասիկ, նոյն օրէն յետոյ, երկրին վաճառականութիւնն ու երկրագործութիւնը ընդարձակեցան, պետութեան մուտքն քիչ ժամանակի մէջ քանի մը պատիկ աւելցաւ, և մեր կարօտ եղած բարեկարգութեանց նպաստող կանոններ ու օրէնքներ հաստատուելով՝ ուսմունքն ու դիտութիւնք ալ բաւական յառաջ գացին:

Մինչդեռ այս գեղեցիկ սկզբնաւորութենէն և մանաւանդ ներքին ապահովութենէն պետութեան յառաջագիմութեան յոյսեր ծագած էին, Գրեմի պատերազմը վրայ գալով՝ երկրին ու ժողովրդեան բարեկարգութեան համար սկսուած ջանից շարունակութեան արդեւ եղաւ: Պետութեան գանձը՝ որ մինչև նոյն ժամանակ ըստակ մը արտաքին պարտք չունէր, մուտքը չկրնալով համապատասխանել պատերազմական հարկեցուցիչ ծախուց, ստիպուեցաւ արտաք-

բառերն ըստ հաճոյս s'elever (մէջ տեղի ձայնաւոր տառը բառնալով) s'elever կամ monter monter և այլն գրեն, ինչպէս մենք Բարձրաշուք կամ Եփէնտի բառերը ըստ հաճոյս Բարձրաշուք կամ Եփէնտի կը գրեմք: Նմանապէս ուրիշ հաղարարութեան դրոյս յիշենք աւելորդ է: ԱՐՇԱԼՈՅՍՏԸ այս դրութիւնը բանաւոր կը թուի Ս. ՄԱՍԻՍԸ կը գրական հանձնարով և լեզուագիտութեամբ ընդհանրապէս այս թերութեան տեղի կուտայ կարծելով բառերը քաղցրացունել կամ հեշտաւոր ընել, չգիտելով որ լեզուն կազմուած է, և ըստ իմ կարծ գաղափարութեան, իւր պէրճ գրութեանց իւրաքանչիւրը, կարծես իւր դատ հեղինակն ունի: ՄԱՍԻՍԸ իւր յառաջագիմութեան և գիւրհասկանալի ոճն ունի, սակայն երկու գրութեանց մէջ ծփալով լեզուին բարեկարգութեան աննպաստ գիրք մը բռնած կերելի, թէ և ազգին մէջ առաջինը կը համարուի լեզուին տեղեակ և օրինաւորութեան նախանձախնդիր: ԼՐԱԳԻՐԸ գալով, խօսելն աւելորդ է: Վասնզի անգրողներն են, վասնզի ճիշդ տաճկաց Էփէնտիք բառին անձնաւորութիւնն է:

—Գրուն ինձի երդումը բեր կըսէ կէս ոսկեղծ գաւաթի մը վրայ Դիփին սենեակիս մէջ նըստած, բոլորակ սեղանին վրայ հանքային ածուխի կրակով մը հողեղալուստ չորեքշաբթին երբոր իշխանը գլխուղ այն սաստիկ հարուստը ինչեղց վինքը Ուինստլի երգեցիկներուն նման ցունելու համար: Եւ կամ—«Այսպէս կինը պարտեղը գնաց կաղամբի տեղի մը փրցունելով խնձորի կարկանդակ մը շինելու համար, և նոյն ժամանակ մեծ արջ մը կուգայ փողոցն ի վեր և զլուրը խանութէն ներս կը խօթէ: Ինչ, աճառ չկայ: սոյնպէս մարդը մեռաւ և կինը մեծ անխօսեմութեամբ սափրիչը առնելով և հոն գրտա-

ուստ փոխ առնելով հոգալ կարօտութիւնն ու պէտքը, և այս պատճառով բացուեցաւ պարտուց դուռը: Արդարեւ, նոյն խնդրոյն մէջ մեր իրաւունքն հաստատող դաշնակից մեծ տէրութեանց դործնական կատարեալ օժանդակութեամբն, (որ պատմութեան մշտնջենաւոր զարգը պիտի ըլլայ), պատերազմէն յետոյ հաշտութիւնը մեր պետութեան ամբողջութիւնն ու անկախութիւնը և բոլորական տէրութեանց դաշնաց ենթարկեց, և հաստատապէս կկարծուէր թէ՛ այս հաշտութիւնը թոյլ կուտայ մեզ մեր ներքին գործերը կարգադրել, և յառաջագիւտութեան ճշմարիտ ընթացք մ'առնելով՝ մեր ապագայն անդորրել: Բայց յաջորդ դէպքերն բողբոջին անկախութեան ու կարծեաց հակառակը երեան բերին, այն է՝ խեղ մը գրգռութեամբ ու հրապուրանք, ներքին խնդիրներ մէկգմէկ ծնելով, ոչ միայն երկրին բարեկարգութեան ու յառաջագիւտութեան զբաղելու ժամանակ չձգեցին, այլ միանգամայն ամէն տարի արտաքին կարգի բանակներ ժողովելով՝ ժողովրդեան ամենէն գործող մասն զէնքի տակ բռնել հարկադրեցին զմեզ, և այս պատճառաւ մեծապէս ֆլանացան երկրագործութիւնն ու վաճառականութիւնը: Այսու ամենայնիւ, այսչափ դժուարութեանց ու արգելքներու առջև, դարձեալ յառաջագիւտութեան ասպարէզին մէջ բարոյապէս և նիւթապէս բաւական տեղ դացած ըլլալն յայտնի է:

Քսան տարիէ հետէ, մեր եկամուտն շարունակ աւելնալն ալ երկրին յառաջագիւտութեան և ժողովրդեան բարեկեցութեան աւելնալուն ապացոյց մ'է:

Թէ և ներկայ կարօտութիւնը վերոյիշեալ պատճառներէն գոյացած է, սակայն դանձային վարչութեան համար ուղիղ ընթացք մը բռնելով՝ կարելի կըլլար կարօտութեան բեռն թեթեւցունել, և գանձային վարին պահել: Բայց յանուն կարգադրութեան ձեռնարկեալ գանձային միջոցներն, ոչ միայն չեն կրցեր կարգադրել այլ բողբոջին ծանրացուցեր են, և առանց ապագային վրայ խորհելու՝ միայն ներկայէն օգուտ քաղել ուղուեր է: Եւ ահա մէկ կողմանէ այս զբաղմանց շարունակելն ու յաջորդելն, և միւս կողմանէ պետութեան զօրութեան ու պատշոյն համար պատերազմական նոր զինուոր ու գործեաց, և զբաժանոր նաւատորմին շինութիւնն, և միանգամայն՝ երկու մասն խնայողաբար հաւատարակելու վիճակի մը մէջ չկրնալ բռնուիլն՝ գանձային վարչութեան

նուերով Պ. Մանիանսոս և մեծն Զօնգօմադիս գլուխը փոքրիկ կոճակովը ասոնց ամենը ինչաւով կրնան նէ բռնէ խաղալու, ինչուսն որ կուտինքրուն գաւազապէս դուրս վառօք վազելով: Ահա սակի լրջութիւն օրով երկրին լեզուն: Արդ՝ լեզուն մասնաւորաց հաճոյից մասնաւորաց ըլլալէն կըմտդի այս խառնակութիւնն ու անկարգութիւնը: Հետեաւար դեռ զաշխարհաբառը լեզու չըլլան, այսինքն ընդհանուր և անփոփոխ օրէնքի մը վրայ չհաստատած, զայն դպրոցականաց աւանդելու փորձը վտանգաւոր ըլլալէ զատ, ամեն քաղաքի ամեն գաւառի դպրոց իւր յատուկ լեզուն պիտի ունենայ: Ստուգիւ, եթէ կուզուի զաշխարհաբառը լեզուացունել, բանացի և արդիւնաւոր կրնայ ըլլալ, զայն ըստ կանոնին, այլ ոչ ըստ սնոյն, միակերպելու գաղափարը: Հայ գրագիտաց (հարկ է միթէ թուել զնոսա), իւրաքանչիւրին դասական դրութիւնը գերծ չէ հակասութիւններէ, կամ ոչ ոք գրագէտ բանաւոր սկզբունք մը չեն ունեցած, ինչպէս ըսած է Պ. Մանս Զերագ: Այսու յայտնի կըտեսնուի մասնաւորաց հաճոյից շարունակութեան վնասը: Պէտք է այս հաճոյքը չբացուեն, պէտք է լեզուն՝ գրողներուն վրայ խնայ կարգել, և ոչ թէ գրողները լեզուն վրայ թագաւորեցունել, որմէ կանոնի անհաստատութիւն կըբխի, և այս պարզօրէն կրտեսնուի մեր աշխարհաբառ լեզուն մէջ: Բո՛ւ է որ հայերը լեզուի կանոնաւորութիւն (աշխարհաբառի վրայ խօսելով) և գրական գրութիւն մը չունենալով, վտանգաւոր կացութեան մը մէջ կըգտնուեն: Այս վտանգն արդէն մենք կրեցինք, և մերձաւոր ապագային ալ պիտի կրէ, երբ այս անտարբերութեան մէջ մնամք: Ինչո՞ւն է կանխատեսել այս վտանգը երբ մտոց

աստիճան աստիճան խանգարման, պարտուց առաւելութեան և ներկայ տարապայման անձկութեան տեղի տուած են:

(Մեացորդ յաջորդ քառով):

ՕՍՄԱՆԵԱՆ ՍԱՀԱՄԱՆԴՐՈՒԹԻՒՆ
Հրատարակեալ է 11—23 Դեկտեմբեր 1876
(Շարունակութիւն: Տես 1037—1038 քիւրք):

Յօդ. 46. Ընդհանուր ժողովոյ բոլոր անդամք երգում կընեն հաւատարմութեան լի հափառ Սուլթանին և հայրենեաց, Սահմանադրութիւնն յարգելու, իրենց յանձնուած պաշտօնն ուղղութեամբ կատարելու, և այս պարտականութեանց հակառակ եղող որեւէ գործերէ զգուշանալու:

Նորքնախոր անդամաց երգումը ժողովին բացման ժամանակ կըլլայ Մեծ—Եպարդոսին առջև: Իսկ այն օրը ներկայ չգտնուողները՝ բացումէն ետեւ իրենց նախագահին առջև՝ յատենի այն ժողովոյն որուն անդամ են:

Յօդ. 47. Ընդհանուր ժողովոյ անդամք իրենց կարծիքն յայտնելու կամ քուէն տալու ազատութիւն ունենալով, մէջերէն ոչ մին չկրնար հրահանգներով կամ խոտուսներով կապուիլ, ոչ ալ տպաւորեալաց ազդեցութեան ներքեւ գործել: Նմանապէս ժողովին մէջ յայտնած կարծեաց կամ տուած քուէից համար չկրնար դատի ենթարկիլ կամ հալածուիլ: Ուրիշ բան է եթէ ժողովին ներքին կանոնադրութեան դէմ վարուի: Այն ժամանակ կանոնադրութեան արամադրութիւնքն ի գործ կըգրուին իւր վրայ:

Յօդ. 48. Ընդհանուր ժողովոյ անդամ մը, երբոք իւր անդամ եղած ժողովին երկու երրորդ մասին բացարձակ առաւելութեամբ ամբաստանուի իբր դաւաճան, իբր Սահմանադրութիւնն եղծանելու ջանագիր կամ իբր կաշառառու, կամ ըստ օրինի բանտարկութեան կամ արտոնանաց դատապարտեալ ըլլայ, Եւրոպական անդամակցութենէ կամ երեսփոխանութենէ կիցայ: Դատաստանն և պատժոյ գործադրութիւնը ձեռնհաս ատենին կվերաբերի:

Յօդ. 49. Ընդհանուր ժողովոյ մէն մի անդամ իւր քուէն անձամբ կուտայ: Քուէարկութեան ժամանակ ձեռնպահ ըլլալու իրաւունք ունի:

Յօդ. 50. Բէ ոք կրնայ միանգամայն երկու ժողովոց անդամ լինիլ:

Յօդ. 51. Երկու ժողովոց մին կամ միւսը չեն կրնար խորհուրդ ընել մինչև որ ժողովին անդամաց կէսէն մէկ աւելին ներկայ չգտնուի:

Այն պարագաներէն գուրս, ուր քուէից եր-

առջև բերուի չորհազար դարերէ ի վեր տեղութիւն ունեցող Հայ ազգին ծոյքն գիտական ծիւղը մշակող կամ հնարող անհատ մը չենելը, Հայ ազգին՝ որ քաղաքակիրթ ազանց կարգին մէջ կըհամարուի: Թողումք այն դարերը՝ ուր տառ չունէինք, հետեապէս գրականութիւն, թողումք այն դարերը՝ ուր գիտութիւնը դեռ սերմ էին, և ոչ ծնունդ կամ մանուկ, և իշնեմք առ այն ժամանակն՝ ուր գեղարուեստը և գիտութիւնը սկսան անձնաւորիլ և աճիլ, ուր բանաստեղծութիւնը հսկայ քայլեր կառնուր, փիլիսոփայութիւնը օրբստօրէ կըլերապարանաւորէր, բնագիտութիւնը տակաւ առ տակաւ մարդկայնութեան մատուցական բարձրացման կընդգծուէր, աստիճապարկութիւնը օր քան զօր տեղեւորաց հուստարակութեան գաղափարը կըլուծէր, և միւս գրական գիտութիւնք, այն է բնագիտութիւնը, քիմիագիտութիւնը, մեքենագիտութիւնը և այլն կատարեալ մարմնաւորութիւն ստանալով՝ նիւթին գաղափարաց ամենա վերջին բառը կըհնչէին, և քննեմք թէ ինչ կրնայ ըլլալ պատճառ որ Հայք միմիայն զոստատենող, շող, այլ ոչ հնարող կամ կատարելագործող մը կըլլայ, և երբեք երգիչ մը, իմաստասէր մը, բնագիտաց մը, աստղագէտ մը, բնագէտ մը, քիմիագէտ, վերջապէս մեքենագէտ մը չունենալէ զատ, հաղիւ թէ այս գիտութեանց մակերեւոյթը կըշօշափէ. և այն խիստ կարօտութիւն ունենալով զայն իր ազգակցին հաղորդելու: Այս գրկումը, յիշալիմք, մեզի կրնէ տրուող գիտաւոր պատճառը լեզուի անկանոնութիւնը և գաղափարաց յայտնութեան միջնորդներուն թերութիւնն ու չգոյութիւնն է. և արդի գործածական լեզուն անպայման յախուռն և դրական գրութենէ զուրկ ըլլալով: Մեր նախ-

կու երրորդ մեծամասնութիւն կըպահանջուի ուրիշ ամեն որոշում ներկայ անդամաց բացարձակ մեծամասնութեամբ կրարուի:

Երբոր քուէներն հաւասար դան, նախադասին քուէն կրկին զօրութիւն կուներնայ:

Յօդ. 52. Անձնական շահու վերաբերեալ խնդրոյ մը համար մէկ կամ միւս ժողովին տրուած խնդրագիրը կըմերժուի, երբ ստուգուի որ խնդրամատոյցը նախ չէ դիմած այն պաշտօնատարաց՝ որոց կըպատկանի խնդիրը, կամ այն իշխանութեան յորմէ կախումն ունին այդ պաշտօնատարք:

Յօդ. 53. Օրէնքի մը հաստատութեան կամ արդէն կեցած օրէնքի մը փոփոխութեան առաջարկութիւնը նախարարութեան կըվերաբերի: Եւրոպական և երեսփոխանական ժողովնալ կրնան իրենց իրաւասութեան վերաբերեալ նիւթոց վրայ նոր օրէնք առաջարկել կամ արդէն կեցած օրէնքի մը փոփոխութիւնը խնդրել:

Այս վերջին պարագային մէջ խնդիրը Մեծ—Եպարդոսին ձեռք վեհա. Սուլթանին կընկալանայ, և Նորին վեհափառութիւնն ալ, եթէ տեղի կայ, իրաւեով Պետական խորհրդոյ կըյանձնէ առաջարկեալ օրինաց ծրագիրը պատրաստել ձեռնհաս պաշտօնարաններէ ստացած բացատրութեանց և տեղեկութեանց համեմատ:

Յօդ. 54. Պետական խորհրդոյ պատրաստած օրինաց ծրագիրը նախ Երեսփոխանական ժողովոյ և ապա Եւրոպական քննութեանն ու որոշման կընկալանայ:

Այս ծրագրերն օրինաց զօրութիւն կատանան երբոր երկու ժողովներն ընդունուելէ ետեւ կայանրական իրաւեով վաւերանան:

Երկու ժողովոց մէկէն վերջնապէս մերժուած օրինաց ծրագիր մը չկրնար նոյն տարւոյն դուստրմանց շրջանին մէջ նորէն ժողովին քննութեանն ու որոշմանց ներկայանալ:

Յօդ. 55. Օրինաց ծրագիր մ'ընդունուած չկրնար համարուիլ եթէ Երեսփոխանաց ժողովէն ու Եւրոպական հետզհետէ չքուէարկի ձայնից առաւելութեամբ, յօդուած առ յօդուած և եթէ ծրագրին ամբողջութիւնն ալ երկու ժողովոց իւրաքանչիւրին մէջ քուէից մեծամասնութիւն չստանայ:

Յօդ. 56. Տէրութեան նախարարներէն և տնոնց փոխանորդներէն, ինչպէս նաեւ պաշտօնապէս հրաւիրեալ պաշտօնատարներէ զատ ոչ ոք կրնայ մանել մէկ կամ միւս ժողովը, ոչ ալ իւր կողմէ կամ փոխանորդաբար խուս մը մարդոց կողմէ խնդիր մատուցանելու կամ զեղուցում մ'ընելու ընդունուիլ:

Նիւթ, իրենց ապագայ սերունդը, այսինքն ըլլալով, զրկելու են մարդկայնութեան բարձրացումն մին միջնորդող գիտութեանց անմասն գործիք եղող լեզուէ: Սակայն այսօր է միթէ որ մենք ալ նոցա օրինակին հետեւիմք, յարատեւելով այս լեքեալ, խառն և շաղկապի գրութեան մէջ, որոյ վախճանը, եթէ ներքին է գուշակել, բարոյապէս չգոյութիւն և նիւթապէս թշուառութիւն կըտրամադրէ: Թողումք հետաւոր տալու գայն, զոր ո գիտէ ժամանակին ինչ պիտի ընէ, և խորհիմք մերձաւոր տալող այն կամ մանկութիւնը՝ որոյ ուսում, լեզու տաւաղելու համար անհրաժեշտ կանոնի մը հարկաւորութիւնը ունիմք, և քանի որ մեր արդի աշխարհաբառ լեզուն դեռ այս կանոնը չունի, պարտ է գրական այսինքն այժմու օրինաւոր և գրական լեզուն աւանդել, որով ուսանողը կարենայ սեղ թէ, լեզու մը ունիմ որ լեզուաց կարգին և որ իբր բանաւոր և անխոփոփ գրութիւն կամ իբր յարգելի յիշատակ, օտար քաղաքաւոր լեզուաց առջև իսկ գոյելի է:

Իսկ երբ ժամանակը օգնէ, և երբ ազգը զարմանալիք կամ հրաշք մը տեղի ունեցան յման, կամք ընէ զաշխարհաբառը լեզուացունել և կանոնաւորել գրաբառի պարզ շարագրութեան (որ օտար լեզուաց գրութեան կըհամապատասխանէ), վերածելով, երբ ազգը կամ իւր ձեռնհաս մասը խելք ընէ, ամեն կողմէ հայկաբան, լեզուագէտ և բաղմահմուտ 30 կամ 50ի չափ անձեր հրաւիրելով ի Պօլիս, գերադոյն ժողով կամ ակադեմիա մը կազմել, երբ այս ակադեմիան, բաւական տարիներ միջոց ունենալով, իւրաքանչիւր բառին վերջնական տայմանը տայ, ընդհանուր բառարան մը յօրինէ, քերականութիւն մը շարագրէ, երբ խոսակցու-

Յօդ. 57. Ժողովոց խորհրդակցութիւններն ու վիճաբանութիւնները թուրքերէն լեզուով կը լինին : Օրինաց ծրագրերն ու առաջարկութիւնները վիճաբանութեան օրէն տուալ կը տրուին ու ժողովականաց կը բաշխուին :

Յօդ. 58. Փութները կը տրուին յանուանէ կոչմամբ կամ արտաքին նշանաց ցոյցերով, և կամ գաղտնի քուէնշանով :

Գաղտնի քուէարկութիւնը ժողովին ներկայ անդամոց մեծամասնութեամբ կ'որոշուի :

Յօդ. 59. Իւրաքանչիւր ժողովոց ներքին կառավարութիւնն իւր նախագահին ձեռք կը կատարուի :

(Շարունակեցի) :

ԱԶԳԱՅԻՆ

ԱՐԻՔԵԼԵԱՆ ՄԱՄԼՈՅՆ Փետրվար ամսաթուոյն մէջ նոյն հանդիսին խմբագիր պարոնին էր անշուշտ ինքեան ինքեան քաջալով մեղէն գրած բանաստեղծութիւնը : Եւ ինչպէս ինչպէս անշուշտ ամենեւին կարեւորութիւն տալով, արժան չհամարեցաք պատասխանել մեր կողմանէ : Սակայն պարտաւորեցաք հրատարակել զհետեւեալ յօդուածն՝ ըստ խնդրոյ երկուստեք հեղինակին նորա, գոր. Ա. ՄԱՄԼՈՅՆ՝ չկրնալով հին կոչել, իւր սովորական բարեմտութեամբ Սոկրատիկ կանուանէ զնա, առանց պատասխանելոյ նորա գործներուն :

ԳՐԱՐԱՆ. ԹԵ՛ ԱՇԽԱՐՀԱՐՈՒՄ

Դ

Մեր երկրորդ յօդուածին մէջ ըսած էինք, Ա. ՄԱՄԼՈՅՆ յարգոյ խմբագրին կը յայտնենք որ եթէ մեր նախորդ և ներկայ յօդուածներուն հետագայ պատասխանէ ուղիղ բանագատութեան օրինաց համեմատ իրեն կը պատասխանենք, ապա թէ ոչ անպատասխանի կը թողունք զինք, վասնզի անտի առարկութիւններով ժամովաճառ ըլլալու նպատակ չունինք :

Ա. ՄԱՄԼՈՅՆ այժմ մեր առարկութեանց՝ դէմ փաստեր չգտնելով և անպատասխանի մնալու հարեկ՝ մեր գրութիւնները տղայական բարբառներ կանուանէ և անոնց կարեւորութիւն տալու առանց գէթ զանոնք ամենափոքր մասամբ հերքելու քաջութիւնը ունենալու : Մենք իւր առարկութիւնները կէտ ու կէտ հերքելէն յետոյ՝ կրնայինք փոխադարձաբար շատ մը նախադասական անուններ տալ անոնց՝ եթէ Ա. ՄԱՄԼՈՅՆ նման անձնական քուէ յարձակումներ ալ ընելու նուաստանայինք : Անձնական այս քուէ յարձակումներէ նախ՝ փաստերը չգոյութիւն և ապա՝ վատթար բարոյականութիւն կը յայտ-

նուի : Դարոցական ծրագրին մէջ տեսանք որ բարոյախօսութիւն և քաղաքավարութիւն դաս կը տրուի աշակերտաց, արդեօք Ա. ՄԱՄԼՈՅՆ գործածած լեզուով կը տրուի այս քաղաքավարութիւնը : և եթէ Պ. տեսուչը բարոյականութեան և քաղաքավարութեան օրինաց դէմ հրապարակաւ այսքան կ'մեղանչէ՝ իւր աշակերտները արդեօք որչափ քաղաքավար պիտի ըլլան . . . անտարակոյս իրենց տեսչին նման : Մենք մեր կոկորդը չենք պատուեր մեր ձայնը 'ի Հնդկաստան լսելի ընելու համար (այս կէտն իսկ ընթերցողին կը թողունք յայտնել որ վիճաբանեալ խնդրոյն հետ յարաբերութիւն ունի՝ թէ չէ) : Բայց Ա. ՄԱՄԼՈՅՆ խմբագիրը իր խելագատական ամբողջ ուժով կաշխատի ժողովրդեան առջև ունեցած իր ծանր պատասխանատուութենէ ազատել, թէ և 'ի զուր . վասնզի ժողովրդը զինք լաւ ճանչցած է և այլ ևս զայն խորել անկարելի է :

Ա. ՄԱՄԼՈՅՆ Սափալանեանց պատուելի յօդուածին համար ալ կըսէ որ յատկապէս պատասխանելու նպատակ ունի . մինչդեռ նոյն յօդուածին հրատարակութենէ վերջ մէկ ամիս ժամանակ ունէր պատասխան պատրաստելու . . . Բայց Ա. ՄԱՄԼՈՅՆ այս ընթացքին պատճառն ալ բացատրենք : Ա. ՄԱՄԼՈՅՆ միշտ դէպքերու և պարագաներու համեմատ կը փոփոխէ իր համոզումները և ընթացքը, ինչպէս օգտաւոր կը հնազանդի օգին . և այժմ որովհետեւ մեր արժանաւոր Առաջնորդը 'ի հարկէ այս խնդիրը նկատողութեան առնելով պիտի փութայ օրինաւոր լուծում մի տալ, Ա. ՄԱՄԼՈՅՆ կըսպասէ այս վճռին որ ըստ այնմ ուղղէ իր ղեկը : Եթէ վճիռը իրեն աննպաստ ըլլայ՝ ինչպէս որ տարակոյս չունինք այս մասին, այն ատեն իւր սովորութեան համեմատ վիճաբանութիւնը պիտի բռնաւորէ ուրիշ վրայ և ինք ժեզուրկութեք հրապարակէ խոյս պիտի տայ, ինչպէս նաեւ այս անգամ ալ փորձեց այս ընթացքը և չյաջողեցաւ : Ա. ՄԱՄԼՈՅՆ նախ և յառաջ յուզեց այս խնդիրը և աշխարհաբառեաներու իբր ներկայացուցիչ հրապարակ նետուեցաւ իր փաստերով : Մենք իր փաստերը հերքեցինք և մեր սկզբունքը փաստերով հանդերձ յառաջ մղեցինք : Բայց Ա. ՄԱՄԼՈՅՆ անոնց բանաւորութիւնը հերքելու անկարող ըլլալով՝ հրապարակէ խոյս տալ կը զգնի վիճաբանութիւնը երկարաձգելով և անհիմն առարկութիւններով քանի մը էջ մտտերէ վերջ՝ առանց սակայն բուն խնդրոյ վրայ խօսելու : Ասկէ երկու հետեւութիւն կը-

նանք հանել, նախ՝ որ Ա. ՄԱՄԼՈՅՆ մեր փաստերէ համադրած ըլլալով հանդերձ իր եսասիրութեան և հպարտութեան պատճառաւ չխոնարհիր իւր սկզբանց վնասակար և անգործադրելի ըլլալը խոստովանելու : Երկրորդ՝ որ Ա. ՄԱՄԼՈՅՆ կուզէ իւր անձնական շահուն զոհել հանրութեան օգուտը և ժողովրդեան վնասով պարարիլ : Այս հետեւութեանց երկուքն ալ Ա. ՄԱՄԼՈՅՆ խմբագրին պատիւ չեն բերեր :

Ա. ՄԱՄԼՈՅՆ զմեզ Սոկրատիկ կը կոչէ և տղայ կանուանէ . այլ սակայն հարկ է՝ առանց անպարծութիւն ընելու, խոստովանելու որ այս Սոկրատիկը Ռուսոմական խորհրդոյ և իւր բերանը կարկեցուց իրենց բռնած ընթացքին ապօրինաւոր, ապարդիւն և ազգաշինաս ըլլալը՝ անհերքելի փաստեր 'ի ձեռին հաստատելով : Այս Սոկրատիկը լեզուի ուրիշ խնդիրներ ալ ունի յուզելիք Ա. ՄԱՄԼՈՅՆ խմբագրին հետ, այլ սակայն եթէ Ա. ՄԱՄԼՈՅՆ խմբագիրը քիչ մը բանադատել սորվի և իմանայ որ անձնական քուէ յարձակումները իրաւացի ոյժ չեն տար, այլ իմաստակութեան ապացոյց են : Ա. ՄԱՄԼՈՅՆ վճռել կուզէ առանց պատճառաւորանելու, և անտեղեակ ըլլալով որ դատաւորի պաշտօն չունի և չկրնար ունենալ այս պարագային մէջ թէ՛ ինքն և թէ՛ Ռուսոմական խորհուրդը : Մենք պատճառաւորանել ուզեցինք . և այժմ Ա. ՄԱՄԼՈՅՆ, որովհետեւ անկարող եղաւ մեր առարկութիւնները օրինաւորապէս հերքել կը յայտնենք որ խնդիրը պարզուած է 'ի նպատակ դաբառի և դատաւոր մը պէտք է վճիռ տալու համար : Գոհ ենք որ Նախախնամութիւնը չնորհեց մեզ արժանաւորելու Առաջնորդ մը, որ այս պարագային մէջ դատաւորի պաշտօն վարելու ամեն արժանաւորութիւնը ունի իրաւամբ, և հաւաստի ենք որ Նորին Սրբութիւնը կարող պիտի ըլլայ Ա. ՄԱՄԼՈՅՆ խմբագրին խօսք հասկըցնել և յայտնել որ ծաղրելի հակառակութեան և վնասակար ընթացքի մէջ կը գտնուին աշխարհաբառեանք : Ա. ՄԱՄԼՈՅՆ կեդրոնական Ռուսոմական խորհրդոյ դէմ ալ մաքառել կուզէ, այսինքն ստորակարգեալ պաշտօնեայ մը ընդդէմ գերադոյն տեսչութեան, Վստոյաճ իմ, դատողութեան չգոյութիւնը մինչև ուր կը հասցնէ զմարդս :

Երբ խմբագիր մը սկզբունք մի կը յուզէ հրապարակի վրայ և զայն կուզէ ընդհանուր ընդունելի ընել, և ապա երբ իրեն հակառակորդներ ելլելով պատճառաւորանեալ առարկութիւններով կը հերքեն իւր սկզբունքի օրինաւորութեան

թեան կամ գրութեան մէջ ոմանց պարոնայանական կամ լեզուին չ. ի կամ . . . յօդերուն գործածութեան դժուար և ծաղրելի գալուն չնայելով, տէրբայի, հայցական, սեռի խնդրի և նախդրի տրականի չիօթ ութիւնները բառնայ, և այսպէս երբ Հայ ազգը գործածական աշխարհիկ լեզու մը ունեցած ըլլայ, այն ատեն ահա կըրպով մը իրաւացի կրնայ ըլլալ դարոցներուն յանդէպ դատարանաց գրաբուսին բարձման գաղափարը, համարելով զայն օրիշ և կղզիացեալ լեզու մը որ հնագիտութեան տեղեակ ըլլալու համար ուսուցիչի միայն, չմոռնալով նաեւ նոյն կանոնադրելի լեզուին փոխանցելու կամ թարգմանելու գուշալ չորս հազար տարուան ազգի մը պատկոտ ելի մատենագրութիւնները կամ կրօնական և եկեղեցական գրութիւնները՝ զորս պարոյականը իմաստասիրելու անհրաժեշտ զգեստն ունի իհարկէ գիւր ինքնութիւնը, զիւր յայրը ճանաչելու համար, և գրաբառին բարձման հետամուտ սեպուհները, որք պատմագէտ են անշուշտ, հայուն զիւր պատմութեան և գրականութեան անձանօթութիւնը քարոզած ըլլան առայժմ, առանց կանոնագրելի լեզուին գոյութեան և առանց նոյն մատենագրութիւնները առ անց լեզու փոխադրելու փոյթին, յաղիւղի և այն ներկայարան լեզու մը դատաստանելու ելնելով : Ինչ կրնայ ըլլալ այսպիսի անխուհիմ գրութեան մը ելքը, եթէ ոչ անուղղակի կերպով քարոզել դարոցականաց կամ ապառնի ազգին թէ իրենց հարց պատմութիւնները նկատարող, կամ իրենց մատենագրութիւնները ներկայացունող լեզուն ծաղրելի և անպիտան լեզու մ'է, հետեւապէս ծաղրելի և անպիտան լեզուով գրուած օրեւ գիւրք և նոյա հեղինակներ անդուռներն են և կեղծ :

Միւս կողմանէ, քանի որ ազատ եմք կարծիք

յայտնելու, եթէ աշխարհաբառ պաշտպանել ուզուի, նախապատիւ կը թուի ինձ Ձերագեան գրութիւնը, քանի որ, գտնէ անսովորականութիւն մը մը վրայ հաստատուած գրութիւն մ'է, և եւրոպական, գլխաւորաբար, ըստ իմ գատողութեան, փրանսական ոճի, հոգեմանց և խոնարհմանց միօրինակութեան, այսինքն պարզութեան և գիւրութեան վրայ ձեռնած է : Ազգային գերադոյն ակողեմիայի մը նախագիծը կրնայ համարուիլ այն, և բանաւորութիւն կը տեսնուի իւր կազմութեան մէջ : Սակայն ստով չարագրանար օրեւ մէկը, երբ աշխարհաբառի պաշտպանութիւն (դատախօսութեան համար) և գրաբառի մերժումը քարոզէ, մինչդեռ առանգելի աշխարհաբառը նոյն գրութիւնը չէ, մինչդեռ ազգային մատենագրութիւնները և պատմութիւնը ներկայացունող լեզու մը չէ, մինչդեռ վերջապէս, ազգային գերադոյն ժողովէ մը կամ օրեւ պաշտօնական մարմինէ մը վաւերացեալ չէ : Դոյն գրութիւնը ծնունդ մ'է գեռ՝ որ մկրտութիւն չունի : Դեռ կը լիւրջեալ է նա . սակայն կերելի թէ բերրի դաշտ, կամ մարդաչէն քաղաք մը պիտի ըլլայ գամ քան զգամ, քանի որ յատկութիւն, ուղղութիւն և գիւրութիւն ցոյցունելով՝ առ ինքն կը յայտնուի զայլ աշխարհաբառ. դրողս, եթէ վաւերացեալ ապառնի ակողեմիայէ մը՝ կը շնորհաւորեմ զինքը : Այդ առայժմ անգիտելի է մեզի համար : Ո՞ր գիտէ ապագային ինչեր պիտի ծնի : Ո՞ր գիտէ թէ ժամանակին ինչ վճիռներ ունի արձակելու : Ո՞ր գիտէ թէ անհուն և անպայման յառաջադիմութիւնը այս մեր թուղթի կտորներու վրայ թափած մէկ երկու խօսից վրայ չպիտի ծիծաղի անհասկանալի ըլլալով իրեն այս տառութիւնները, և ցաւելով մեր վրայ որ տասնեակները դարուն վերջերք՝ դեռ ազգութեան մը

գոյութեան տարրը եղող լեզուի վրայ վիճեր եմք : Այդպիսի ժամանակ մը ստուգապէս լեզուին տէրը պիտի ըլլայ Ա. իրեն համար լուծելի խնդիր կամ պարզելի կնճիկ չմնալով, հայը լեզուին ներողութեամբ, պիտի սկսի իւր մտաւորական անձուկ և սահմանափակ շրջանակէն դուրս ելնել : Մէկ խթան մը իրապէս պիտի իշխէ իր վրայ, պիտի անհանգիստ ընէ զինքը, եւ այս խթանը պիտի ըլլայ գիտութիւնը, միտքը : Ինչ քաղցր երազ : Սակայն այս ապագայն պիտի գայ, ինչ կընչանակէ այս առարկանը, քանի որ մեր նպատակը առ այժմ ներկային, կամ գրաբառին կանոնաւորութեան, և աշխարհաբառին, որ հազարաւոր ձեւերով կը շրջի մեր արդի ողբայի դրականութեան մէջ, առայժմ դարոցականաց անաւանդելի ըլլալուն վրայ խօսիլ էր : Կընչանակէ թէ գիտեամբ որ այս ապագայն գալով, մեր ամեն կնճիկը պիտի լուծէ, և կանոնաւոր հայերէն լեզու մը պիտի ծնի, և այնտանի եղող գրաբառ մատենագրութիւններն ալ առ այդ լեզու փոխադրէ : Սակայն գիտեամբ նաեւ որ առայժմ, քանի որ այդ ապագային համար դեռ պատրաստութիւններ չկան, Հայ մանկութեան՝ իւր Հայ ըլլալը, իւր ինքնութիւնը, իւր հայրը ճանաչել տալու համար, իւր հօրը լեզուն կամ գրելը ունուցանել, իւր պաշտած կրօնից լեզուին կամ ինչութեան ծանօթացանել պարտաւոր եմք : Եւ աւելորդ է ալ կրկնել, սպասեմք մինչև որ իւր հօրը լեզուն, իւր պատմութեան և իւր դատաւանակ կրօնին լեզուն՝ կանոնաւոր, բանասիր, հիմնաւոր և անփոփոխ լեզուի մը փոխադրուի, և գրաբառը զատ, մեզի տնտեսն և կղզիացեալ վիճակի մը մէջ գտնուած ըլլայ :

Իշմիր, 10 Մարտ 1877

Գ. Կ. ՍՎԱՆԱՆ

